

**ԲԱՌԻ ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ  
ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԹՈՒՐՔԵՐԵՆՈՒՄ**

**ԱՐՄԵՆ ՍԵԼՔՈՆՅԱՆ**

Հոդվածում քննության են առնվում ժամանակակից հայերենի և թուրքերենի բառի կառուցվածքային ընդհանրություններն ու տարբերությունները զուգադրական լեզվաբանության տեսակետից, երևան են հանվում այդ լեզուների տիպաբանական բնութագրերը:

Բառույթի կառուցվածքային սպառնիչ ուսումնասիրություն միայն բառակազմական վերլուծությամբ հնարավոր չէ կատարել: Անհրաժեշտ է հնարավորինս խոր թափանցել բառի կառուցվածքի մեջ և յուրաքանչյուր բաղադրյալ բառ վերլուծել մինչև այլևս անտրոհելի իմաստակիր միավորները: Այդպիսի քննությունը, ի տարբերություն բառակազմական և ձևաբանական վերլուծության, հնարավորություն է տալիս բացահայտելու և նկարագրելու բառի բոլոր կարգի նվազագույն իմաստակիր բաղադրիչները՝ ձևույթները և նրանց զուգորդման կաղապարները: Բառի մեջ յուրաքանչյուր քերականական իմաստ կարող է արտահայտվել առանձին մասնիկի միջոցով, և, ընդհակառակը, մի քերականական մասնիկի մեջ կարող են միավորվել մեկից ավելի քերականական իմաստներ, ասել է թե՛ մի մասնիկը կարող է հանդես գալ որպես մի քանի քերականական իմաստների կրող: Քերականական իմաստների դրսևորման այնպիսի եղանակը, երբ թեքված բառը բաղադրվում է հիմքից և նրա վրա դրված մի շարք մասնիկներից, որոնցից յուրաքանչյուրը մի քերականական իմաստի կրող է, լեզուների կցական տիպի ամենազխաժողոր առանձնահատկություններից մեկն է, ի տարբերություն թեքական լեզուների, երբ մի քանի քերականական իմաստներ բառի մեջ կարող են արտահայտվել մեկ մասնիկի միջոցով:

Կցականության էությունն այն է, որ քերականական կարգերն արտահայտվում են մասնիկավորումով, երբ կիսահիքնուրույն մասնիկները կամ վերջավորությունները (ածանցները)՝ որպես ձևակերտներ, մեկը մյուսի հետևից հաստատուն կարգով կցվում են բառահիմքի վերջից: Այսպիսով, բառակազմական և բառափոխական երևույթները արտաքին տեսքից բնութագրվում են հատուկ մասնիկների (ձևույթների) առկայությամբ: Նման երևույթների հետևանքով մեկ վանկից բաղկացած բառի սահմանները կարող են զգալիորեն աճել:

Ժամանակակից հայերենը առավելապես կցական տիպի լեզու է, թեև առկա են նաև վերլուծականության և թեքականության տարրեր: Թուրքերենում կցականությունը և ձայնաներդաշնակությունը (սինհարմոնիզմ)՝ մասնիկների ձայնավորների՝ արմատականներից նմանվելու երևույթը, սերտորեն առնչվում են միմյանց: Կապն այնպիսին է, որ մեկի գոյությունն առանց մյուսի անհնար է: Նրանց մեջ առկա է ուղղակի կախվա-

ծություն. ձայնաներդաշնակության ուժեղացումը կամ թուլացումը հետևանք է կցականության ուժեղացման կամ թուլացման: Մասնիկները թուրքերենում չունեն հստակ սահմանված հնչյունական բաղադրակազմ. յուրաքանչյուր մասնիկ մի շարք տարբերակների միասնություն է և կոնկրետանում է միայն առանձին բառերի մեջ. օրինակ՝ հոգնակերտ մասնիկն ունի երկու տարբերակ՝ *-lar* և *-ler*, սեռական հոլովի թեքությոն ունի չորս տարբերակ՝ *-ın, -in, -un, -ün*: Սինհարմոնիզմը համարվում է այն գործոններից մեկը, որը նպաստում է կցական լեզուների կայունության պահպանմանը: Ինչպես ցույց է տալիս Բ. Ա. Սերբերենիկովը, լեզուների կառուցվածքային կցական տիպն ունի բացառիկ կայունություն, այդ իսկ պատճառով կցական լեզուները երկար ժամանակ պահպանում են բառերի ձևավորման միևնույն կառուցվածքային-ձևաբանական տիպը<sup>1</sup>:

Պ. Կ. Վաարասկը կցականությունը որպես տիպ բնութագրում է հետևյալ կերպ. 1) բառարմատը փոփոխության չի ենթարկվում, այսինքն՝ ներքին թեքում գոյություն չունի, 2) հնչյունների հերթագայությունները հանդիպում են ոչ թե անկախ, այլ որոշակի հնչյունական պայմաններում, 3) առկա է ձայնավորների ներդաշնակություն, 4) յուրաքանչյուր առանձին լեզվում գերակշռում է ածանցման մեկ տիպ, օրինակ՝ թուրքերենում՝ վերջածանցումը, 5) ածանցները, որպես կանոն, մենիմաստ են (վերջամասնիկների մենիմաստություն), 6) ածանցները մեխանիկորեն անփոփոխ միանում են բառահիմքին<sup>2</sup>:

Բառային ձևային կառուցվածքի հիմնական տարբերությունն այլ տիպի լեզուներից այն է, որ կցական լեզուներում այն «շղթայական» է. «Բառը, որ կառուցված է կցականության սկզբունքով, նման է երկար մի գնացքի, որտեղ արմատը շոգեքարշն է, իսկ վագոնների դերում հանդես է գալիս ածանցների շղթան, որոնց միջև «բացվածքը» միշտ պարզորոշ երևում է»<sup>3</sup>: Այս փոխաբերական նկարագրության էության հիմքում կարող ենք տեսնել կցական տիպի լեզուներին առնչվող որոշակի մի ըմբռնում, որի էությունը հետևյալն է. 1) բոլոր բառերը կամ բառաձևերը կազմվում են կցվող վերջամասնիկների միջոցով, որոնք մեխանիկորեն ավելանում են բառարմատին կամ բառահիմքին, 2) յուրաքանչյուր բառ բաղկացած է կամ կարող է բաղկացած լինել արմատից (կամ հիմքից) և մեկ կամ մի քանի վերջամասնիկներից, 3) կցական լեզուներում ածանցների կապակցությունները նման են «իրենց իմաստը միշտ պահպանող ինքնուրույն ձևայինների շղթայի»<sup>4</sup>, 4) բոլոր ածանցներն ինքնուրույն են և համարժեք, դրանց բաժանումը բառակազմականի և բառահարաբերականի ակնհայտ չէ, «վերջավորություն» (թեքման մասնիկ, թեքությոն) հասկացությունը այս տիպի լեզուներում կիրառելի չէ, 5) կցական լեզուներում բառերը ձևային-ածանցների «շղթաներ» են, որոնք «շարվում են» արմատի վրա:

<sup>1</sup> Տե՛ս "Морфологическая типология и проблема классификации языков". М.-Л., 1965, էջ 109:

<sup>2</sup> Տե՛ս **Ваараск П. К.** Аналитический и синтетический строй языка. Таллин, 1961, էջ 122:

<sup>3</sup> **Реформатский А. А.** Введение в языкознание. М., 1960, с. 224.

<sup>4</sup> "Морфологическая типология и проблема классификации языков", с. 57.

Վերը նշվածն ավելի լավ հասկանալու համար ձևային վերլուծության ենթարկենք **athilarima** «ծիավորներիս (իմ ձիավորներին)» բառը՝ սկսելով «գնացքի» վերջից՝ նրա վերջին «վագոնից»:

Բառահարաբերական **-a** ձևային տրական հոլովի ցուցիչն է՝ բառահարաբերական (վերաբերական) իմաստ արտահայտող երկրորդական ձևային: Նույնը կարող ենք ասել նաև **-a**-ին նախորդող **-im** ձևային մասին, որը ստանձնում է 1-ին դեմքի եզ. թվի ստացական վերջավորության դերը: Սրան նախորդող **-lar** ածանցը հոգնակի թվի ցուցիչն է: Ինչպես և ցանկացած ածանց, այնպես էլ **-lar**-ը զուրկ է բառային իմաստից: Եվ վերջապես, վերջից չորրորդ **-li** ածանցը ծառայում է որպես ածականակերտ մասնիկ. **at** – «ծի, նժույգ», **at** + **-li** > **athli** «ծիավոր»: Ինչ վերաբերում է **at** բառին, ապա դրա ձևաբանական արժեքն է եզակի թվով, ուղղական հոլովով գոյական անուն:

Այսպիսով, թուրքերեն **athilarima** «ծիավորներիս» բառի ձևային կառուցվածքն է **at+li+lar+im+a**: Սա նշանակում է՝ **at** «ծի, նժույգ» բառից **-li** բառակազմական ածանցի կցմամբ կազմվում է մեկ այլ բառ՝ **athli** «ծիավոր» ածականը (հմմտ. **athli kişi** «հեծյալ մարդ, ձիավոր»): **athli** ածականի գոյականացմամբ՝ **-lar** հոգնակերտի հավելումով կազմվում է **athilar** «ծիավորներ» գոյականը. **-im** բառահարաբերական ձևային միջոցով կազմվում է **athilar** բառի ստացական ձևը, այլ կերպ ասած՝ **-im** ձևային հանդես է գալիս որպես եզ. թվի 1-ին դեմքի պատկանելություն ցույց տվող վերջամասնիկ՝ **athilarim** «ծիավորներս»: Եվ վերջապես, տրական հոլովի **-a** մասնիկի միջոցով կազմվում է **athilarima** «ծիավորներիս» բառաձևը:

Այստեղ ի հայտ է գալիս կցական լեզուների ձևաբանական տիպի հիմնական առանձնահատկությունը՝ «մեկ ձև՝ մեկ իմաստ», «յուրաքանչյուր իմաստ ունի արտահայտման հատուկ ձև»: Ըստ Բ. Ա. Սերբերեննիկովի՝ «Կցական լեզուներում վերջամասնիկների կիրառության լայն հնարավորությունը ինչ-որ չափով դրանց միարժեքության միտումի հիմնական պատճառներից մեկն է»<sup>5</sup>: Ի տարբերություն դրա՝ հաստատվում է, որ հոլովական և բայական վերջավորությունները թեքական լեզուներում առավելապես բազմիմաստ են, իսկ կցական լեզուներում՝ միշտ մենիմաստ<sup>6</sup>: Նշենք, սակայն, որ ի հակադրություն սրա՝ մի շարք թուրք լեզվաբանների կարծիքով թուրքերենում նույն վերջամասնիկը կարող է հանդես գալ տարբեր գործառույթներով<sup>7</sup>. օր.՝ **-acak (-ecek)** վերջամասնիկը, որպես խոնարհման վերջավորություն կցվելով բայահիմքին, կազմում է սահմանական եղանակի ապառնի ժամանակաձև: Որոշ դեպքերում, սակայն, խզելով կապը խոնարհման վերջավորության հետ, ստանում է բառակազմական նշանակություն՝ կազմելով բառեր, որոնք միտվում են դեպի գոյականները կամ ուղղակի վերածվել են գոյականների, որն ավելի պատկերավոր կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

<sup>5</sup> Серебренников Б. А. Причины устойчивости агглютинативного строя и вопрос о морфологическом типе языка. М.-Л., 1965, с. 20.

<sup>6</sup> Տե՛ս "Морфологическая типология и проблема классификации языков", էջ 58:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 47:

<i>Խոնարհման վերջավորություն</i> <i>Çekim eki</i>		<i>Բառակազմական վերջածանց</i> <i>Yapım eki</i>	
Ahmet yarın gelecek.	Ահմեդը վաղը գալու է:	Bir gün gelecekte yine buluşuruz.	Գալիքում մի օր կրկին կհանդիպենք:
Bu iş bugün bitecek.	Այս գործը այսօր վերջանալու է:	Bana içecek bir şeyler alır mısın?	Ինձ խմելիք կանո՞ւն:

Ճիշտ է նկատել Օ. Պ. Սունիկը, ըստ որի՝ թե՛ կցական և թե՛ թեքական լեզուներում առկա վերջամասնիկները կարող են լինել և՛ միարժեք, և՛ բազմարժեք, պարզապես միարժեքության և բազմարժեքության յուրահատկությունները տարբեր տիպի լեզուներում տարբեր կերպ են դրսևորվում<sup>8</sup>:

Լեզվաբաններից Վանդրիեսը մասնիկավորումը դիտում է իբրև զուտ ձևաբանական երևույթ՝ ձևաբանական տարրերը արմատին ավելացնելու միջոց<sup>9</sup>: Այս տեսակետից բոլորովին այլ է հայերենի *ածանցում* եզրաբառի ըմբռնումը՝ որպես սոսկ բառակազմական նշանակություն ունեցող մասնիկների հավելում: Հայ լեզվաբանները երկրորդական ձևայինների մեջ տարբերակում են երկու տեսակ. առաջինը կոչում են բառաստեղծական կամ բառակազմական երկրորդական ձևայիններ (ինչպես՝ **-արան**, **վեր(ա)-**, **-ուհի**), իսկ երկրորդը՝ բառահարաբերության կամ ձևակազմական երկրորդական ձևայիններ, որոնք ցույց են տալիս բառի հարաբերությունը կամ շարահյուսական դերը նախադասության մեջ:

Ժամանակակից հայերենում, որպես կանոն, ձևակազմական և բառակազմական ձևայինները տարբերակված են, և ձևայինների մեծ մասը որոշակիորեն հանդես է գալիս կամ ձևաբանական կամ բառակազմական դերով: Այսպես, օրինակ՝ **-եր** (*սարեր*), **-ներ** (*աթոռներ*), **-ը** (*սեղանը*) և մի շարք այլ ձևայիններ սոսկ ձևակազմական դեր ունեն, իսկ **-ային** (*մշակութային*), **-ական** (*այգեգործական*), **-ություն** (*լեզվաբանություն*), **-ավետ** (*բուրավետ*) և բազմաթիվ այլ ձևայիններ՝ սոսկ բառակազմական դեր: Սրանով հանդերձ՝ հայերենում ևս հանդիպում են երկգործառույթ՝ միաժամանակ բառակազմական և ձևակազմական արժեք ունեցող ձևայիններ, ինչպիսիք են դերբայների ածանց-վերջավորությունները, բայանուններ կազմող **-ումն** ածանցը, **-անի**, **-այք** հավաքական հոգնակերտները և այլն<sup>10</sup>:

Բառահարաբերական մասնիկներն ավելի պակաս կախման մեջ են գտնվում հիմքից, քան բառակազմական ածանցները, քանի որ բառահարաբերական մասնիկները կարող են միանալ ցանկացած հիմքի, մինչդեռ այդպես չեն բառակազմական ածանցները. դրանք միանում են սահմանափակ թվով հիմքերի կամ արմատների: Այսպես՝ **-ավոր** ածանցով կարելի է կազմել *աշխատավոր*, *վաստակավոր*, *հոչակավոր*, բայց ոչ՝ *ընկերավոր*, *քաղաքավոր* և այլն:

<sup>8</sup> Տե՛ս **Сунник О. П.** Вопросы типологии агглютинативных языков (К проблеме соотношения агглютинации и флексии). М.-Л., 1965, էջ 25:

<sup>9</sup> Տե՛ս **Вандриес Ж.** Язык. М., 1937, էջ 85:

<sup>10</sup> Հմմտ. **Լ. Հովսեփյան**, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 342 և հաջ.:

Հայերենին բնորոշ են թե՛ նախածանցումը, թե՛ վերջածանցումը՝ վերջինիս բացահայտ առավելությամբ: Վերջածանցները, որպես կանոն, դրվում են արմատների կամ հիմքերի վրա, իսկ նախածանցները՝ պատրաստի բառերի վրա, որի պատճառով էլ առաջինները սովորաբար փոխում են բառերի խոսքիմասային իմաստները, իսկ վերջինները՝ ոչ<sup>11</sup>: Հայերենի բառակազմության մեջ ընդհանրապես, իսկ ածականների կազմության մեջ մասնավորապես նախածանցները մեծ դեր ու կշիռ չունեն<sup>12</sup>: Ի տարբերություն հայերենի՝ թուրքերենը պատկանում է կցական լեզուների այն տիպին, որում առկա է միայն վերջամասնիկավորում<sup>13</sup>: Բառերը այս լեզվում բաղկացած են հիմնականում բառարմատից և նրան կցված առնվազն երկու կամ երեք վերջամասնիկներից:

Թուրքերենում բառի ածման ճանապարհը մեկն է՝ վերջամասնիկավորումը, քանի որ այս լեզվում գոյություն չունեն միջածանցներ և նախածանցներ (բացառությամբ բեկյալ կրկնավոր բարդությունների՝ *kırmızı – kıpkırmızı* «կարմիր – կաս-կարմիր», *sarı – sapsarı* «դեղին – դեփ-դեղին», *temiz – teptemiz* «մաքուր – մաս-մաքուր», *doğru – dosdoğru* «ուղիղ, հարթ – բացարձակապես ուղիղ, բոլորովին ուղիղ»<sup>14</sup>:

Վերջածանցումը ժամանակակից հայերենում կատարվում է որոշակի կայուն կաղապարներով, ըստ որում, այդ կաղապարները բաղադրվում են գոյականական (N), ածականական (A), բայական (V) և մակբայական (M) հիմքերից՝ գոյականական (R<sub>1</sub>), ածականական (R<sub>2</sub>) և մակբայական (R<sub>3</sub>) վերջածանցների հավելմամբ<sup>15</sup>: Հնարավոր կաղապարները տեսականորեն հեշտությամբ ստացվում են համապատասխան սերող աղյուսակի միջոցով.

	R <sub>1</sub>	R <sub>2</sub>	R <sub>3</sub>
N	1 NR <sub>1</sub>	2 NR <sub>2</sub>	3 NR <sub>3</sub>
A	4 AR <sub>1</sub>	5 AR <sub>2</sub>	6 AR <sub>3</sub>
M	7 MR <sub>1</sub>	8 MR <sub>2</sub>	9 MR <sub>3</sub>
V	10 VR <sub>1</sub>	11 VR <sub>2</sub>	12 VR <sub>3</sub>

Թուրքերենը բառակազմական ածանցների տեսանկյունից շատ հարուստ լեզու է: Կցվելով անուն խոսքի մասին կամ բային՝ դրանք կարող են կազմել հազարավոր բառեր: Օսմաներենում (արաբատառ թուրքերեն) արաբերենի ազդեցությամբ թուրքերենի վերջամասնիկներն ու բա-

<sup>11</sup> Տե՛ս **Մ. Ասատրյան**, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա հատոր, Եր., 1970, էջ 65:

<sup>12</sup> Տե՛ս **Մ. Ասատրյան**, ժամանակակից հայոց լեզու, Եր., 2004, էջ 66:

<sup>13</sup> Մաքուր կցական լեզուներում նախածանցների բացակայությունը բացատրվում է հետևյալ հիմնական գործոնով. վերջածանցների լայնամասշտաբ կիրառումը ստեղծել է իներցիայի հայտնի մի ուժ, որի հետևանքով, ըստ համաբանության, կիրառվում է բառակազմության միայն վերջածանցավոր (վերջամասնիկավոր) միջոցը:

<sup>14</sup> Նշված օրինակների մասին կան որոշակի տարակարծություններ. բանն այն է, որ թուրքերենում դրանք համարվում են ածանցման եղանակով կազմված բաղադրություններ (տե՛ս **Tufan Demir, Türkçe Dilbilgisi, Ankara, 2006**, էջ 108), ի տարբերություն հայերենի, որտեղ այս բառերը կազմված են համարվում ոչ թե ածանցի, այլ նույն բառի կամ արմատի կրկնությամբ: Սակայն, օրինակ, ռուս թուրքագետներից Ն. Կ. Դնիտրիենկո նման երեվոյթը համարում է արմատի կրկնում՝ վերջինիս մասնակի ձևափոխությամբ (ինչպես հայերենում է):

<sup>15</sup> Տե՛ս **Ս. Գալստյան**, Գոյականական հիմքերից ածական կազմող վերջածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1975, էջ 3:

ռարմատներն անուշադրության էին մատնվում և նոր բառեր կազմելու փոխարեն՝ արաբերենից ու պարսկերենից օտար բառեր էին փոխառվում<sup>16</sup>: Հանրապետության հռչակումից հետո միայն թուրքերենին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում, և սկսվում է նոր բառեր կերտելու գործընթացը<sup>17</sup>:

Թուրքերեն բառերի կառուցվածքը կարելի է ներկայացնել մի կարճ բանաձևով՝ արմատական ձևույթ  $\sqrt{(N/V)}$  + բառակազմական երկու տիպի ձևույթ՝ (A+B) + բառափոխական (բառահարաբերական) ձևույթ (C): Ստացվում է հետևյալ բանաձևը.  $\sqrt{N/V}+A+B+C$ : Սա նշանակում է, որ թուրքերենում յուրաքանչյուր բառ բաղկացած է արմատական ձևույթից՝ երկու կարգի բառակազմական ձևույթից և բառահարաբերական ձևույթից:

Այս բանաձևով կարելի է արտահայտել թուրքերենի բառերի ճնշող մեծամասնությունը: Սակայն նշված յուրաքանչյուր տառ-խորհրդանշի տակ թաքնված է ձևույթների խմբի շատ բարդ մի համակարգ: Սկզբից անդրադառնանք արմատական ձևույթներին: Թուրքերենում բառակազմական համակարգը սահմանում է արմատական ձևույթների միայն երկու տեսակ՝ կա՛մ անվանական N (Nomen), կա՛մ բայական V (Verbum): Թուրքերենին հատուկ է նաև արմատական ձևույթի առանձին տեսակ՝ P (Particulum), երբ արմատի դերում հանդես են գալիս սպասարկու բառերը կամ մասնիկները, որոնք, որպես կանոն, չունեն բառակազմության իրենց համակարգը, այդ պատճառով էլ արմատական ձևույթների միջև զբաղեցնում են հատուկ դիրք: Այսպիսով, արմատական ձևույթների կազմը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.  $\sqrt{N/V(P)}$ , այսինքն՝ թուրքերենում բառերի բոլոր արմատները բաժանվում են երեք խմբի՝ 1) բառարմատ, որը ցույց է տալիս առարկա (N), 2) բառարմատ, որը ցույց է տալիս գործողություն (V), 3) սպասարկու բառերի բառարմատ, որն արտահայտում է քերականական հարաբերություն (P):

N տիպի մեջ ներառվում են. 1) գոյական անունները (N1), 2) ածական անունները (N2), 3) մակբայները (N3), 4) թվական անունները (N4), 5) ձայնարկությունները (N5), 6) դերանունները (N6), V տիպի մեջ ներառվում են միայն բայերը, իսկ P տիպի մեջ՝ 1) մասնիկները (P1), 2) հետադրությունները (P2), 3) կապերը (P3):

Ժամանակակից հայերենում բառի ձևույթային կազմի կաղապարը, ըստ Գ. Ջահուկյանի, կունենա  $((a+)+b)A(+b(+a))$  տեսքը, որտեղ A կարգի ձևույթները հայտնի են որպես անկախ, այլ կերպ՝ արմատական ձևույթներ, a կարգի կախյալ եզրային ձևույթները՝ որպես թեքություններ կամ բառաթեքական (ձևաբանական) մասնիկներ, իսկ b կարգի կախյալ ոչ եզրային ձևույթները՝ որպես ածանցներ կամ բառակազմական մասնիկներ: Կաղապարային այս բանաձևը հայերենում չունի ընդհանուր նմուշ. կարելի է միայն, որպես դրա մասնակի դրսևորում,  $((a+)+b)A(+b(+a))$  բանաձևի համար բերել  $((կ+)+գերա+)+ծախ(+u(+են))$  նմուշը:

<sup>16</sup> Օրինակ՝ bihaber – «անտեղյակ» (bi - «ան» նախածանցը փոխառված է պարսկերենից, իսկ հիմքը արաբերեն բառ է՝ "haber" - «լուր, տեղեկություն»): Ժամանակակից թուրքերենում այժմ կիրառվում է բառի վերջածանցավոր տարբերակը՝ habersiz՝ նույն "haber" արմատով և "siz" վերջամասնիկով:

<sup>17</sup> Տե՛ս Mehmet Hengirmen, Türkçe temel dilbilgisi, Ankara, 2006, էջ 287:

Ժամանակակից հայերենում ամենաբազմաճյուղյա կաղապարը կունենա հետևյալ բանաձևը՝  $((a+b)b_1+A(+c(+d(+e))))$ : Այս ընդհանուր բանաձևը կարող է ունենալ զանազան մասնակի դրսևորումներ՝ ըստ **A**-ի խոսքիմասային պատկանելության և ածանցների բնույթի ու շարադասության: Նշված բանաձև-կաղապարի համար կարելի է տալ **ան-վեր-արտա-դր-ող-ական-որեն** նմուշօրինակը: **A**-ին նախորդող ածանցները կոչվում են նախաածանցներ, հաջորդողները՝ վերջածանցներ: Կաղապարակազմ ածանցների կարգերի համար կարելի է նշել հետևյալ իմաստագործառական արժեքները. 1) առաջին կարգի (**a**) ածանցները (նախաածանցները) ունեն ժխտական կամ, ավելի ճիշտ, բացառողական արժեք (**ան-տուն**՝ «առանց տան»), 2) երկրորդ և երրորդ կարգի (**b** և **b<sub>1</sub>**) ածանցները (նախածանցները) գերազանցապես բայածանցներ են, ընդ որում, երկրորդ կարգի ածանցները՝ **վեր(ա)**, արտահայտում են «ժամանակային» (կրկնության), երրորդ կարգի ածանցները՝ **արտ(ա)**, **ենթ(ա)**, **միջ(ա)**, **ներ(ա)** և այլն՝ «տարածական իմաստներ»: Իմաստային առումով դրանք հարաբերակից են ժամանակի ու տեղի մակբայներին և, հետևաբար, բացառապես ածանցներ չեն, 3) չորրորդ կարգի ածանցները (**c**) կամ, որ նույնն է, առաջին կարգի վերջածանցները, գոյականակերտ ածանցներ են, որոնք երբեմն կարող են նախորդել հինգերորդ (**d**) կարգի ածանցներին, երբեմն՝ ոչ (*հմնտ. ման-վածք-ային*, բայց ոչ *դր-ություն-ական/ային* և այլն). ըստ այսմ, կարելի է տարբերել նախադիրքային և վերջադիրքային գոյականակերտ ածանցներ (ամենատիպական վերջադիրքային ածանցը **-ություն**-ն է), 4) հինգերորդ (**d**) կարգի ածանցները կամ երկրորդ կարգի վերջածանցները ածականակերտ են, որոնք գոյականակերտ ածանցների նման կարող են լինել նախադիրքային և վերջադիրքային, 5) վեցերորդ կարգի (**e**) ածանցները կամ երրորդ կարգի վերջածանցները մակբայակերտ են<sup>18</sup>:

Ըստ ածանցման հնարավորությունների՝ ժամանակակից հայերենի «լիիմաստ» բառարմատները դասավորվում են հետևյալ կերպ՝ ա) բարմատներ, բ) գոյականական արմատներ, գ) ածականական արմատներ և դ) մակբայական արմատներ: Այլ կերպ ասած՝ բառակազմական ամենալայն հնարավորություններ ունեն բայական և ապա գոյականական արմատները, համեմատաբար պակաս հնարավորություններ՝ ածականական և մանավանդ մակբայական արմատները:

Բառի կազմում ձևույթների դիրքային բաշխման օրինաչափություններ են գործում ոչ միայն բառակազմության, այլև ձևակազմության (հոլովման և խոնարհման) համակարգում: Ժամանակակից հայերենում հոլովման վերջամասնիկները իրար են հաջորդում որոշակի կարգով: Հաշվի առնելով վերջամասնիկների հնարավոր ամենամեծ քանակ պարունակող ձևերն ըստ զուգորդվող վերջամասնիկների բնույթի և հաջորդականության՝ կարելի է տարբերակել հետևյալ կառուցվածքային կաղապարները. 1) **քաղաք (+ներ) + ից +ս))**), 2) **ընկեր (+ոջ) ից) +ս))**), 3) **կան (+անց) + ից) +ս))**), 4) **մարդ (+կ) + անց) + ից) + ս))**)<sup>19</sup>: Այս կաղապարներից ամենագործունը և ամենատարածվածը առաջինն է. այն ընդ-

<sup>18</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 152-153:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 164:

գրկում է գոյական անունների մեծ մասը, նրան են պատկանում գոյակա-  
նաբար առնված և հոլովված բոլոր ածականներն ու թվականները: Երկ-  
րորդ և երրորդ կաղապարներն ընդգրկում են միայն սակավաթիվ գոյա-  
կան անուններ, այն էլ ոչ բոլոր հնարավոր ձևերով, չորրորդ կաղապարը,  
որ ամենաբազմանդամն է, ընդգրկում է միայն **մարդ** հիմքը և այն որպես  
երկրորդ բաղադրիչ ունեցող բարդ հիմքերը (**տղամարդ** և այլն):

Հոլովման համակարգի քննության ժամանակ պարզվում է, որ հոլով-  
ման հարացույցը կազմող վերջամասնիկները իրար են հաջորդում որո-  
շակի կարգով՝ թվանիշ+դասահոլովանիշ<sup>20</sup>+հոլովանիշ+առկայացական  
հոդ:

Խոնարհման համակարգի քննության դեպքում հարացույցը կազմող  
վերջամասնիկների առանձնացման և հաջորդման կարգը որոշելիս հանդի-  
պում ենք դժվարությունների, որը հիմնականում պայմանավորված է խո-  
նարհման հարացույցում երևան եկող, այսպես կոչված, լծորդ ձայնավորնե-  
րի դերով, որն առաջին հայացքից լիովին նույնական է թվում հոլովման մեջ  
մասնիկների երկրորդ կարգը կազմող («դասահոլովանիշ») վերջավորու-  
թյունների դերին: Բայց, ի տարբերություն «հոլովիչների», «խոնարհիչ»  
ձայնավորները կան «լծորդները» հանդես չեն գալիս որպես ինքնուրույն  
վերջավորություններ և չունեն որոշակի տեղ: Դրանք կարող են նախորդել  
ամենատարբեր բնույթի մասնիկների և, փաստորեն, նրանց հետ մեկ որո-  
շակի անբողջություն կազմել՝ պատկանելով մերթ հիմքին, մերթ վերջավո-  
րությանը: Այսպես, **ծանոթ-ացն-են** ձևի մեջ **ե**-ն նախորդում է մերթ պատ-  
ճառական սեռանիշ **ցն**-ին, մերթ դիմանիշ **մ**-ին, **վազ-եց** ձևի մեջ այն նա-  
խորդում է կերպանիշ **ց** մասնիկին և այլն:

Ժամանակակից հայերենում խոնարհման ժամանակ կունենանք  
քառանդամ լիակաղապար՝  $(a+)A(+b)+c$ ), ընդ որում, **b** և **c** տարրերը կա-  
րող են վերլուծելի լինել՝ ունենալով իրենց մանրակաղապարները: Որ-  
պես այս կաղապարի մուշ կարող է ծառայել (**չ**-բեր(-եց)-ի)) բայաձևը:  
Հիշյալ կաղապարի համար հնարավոր տիպերը կարելի է արտահայտել  
հետևյալ աղյուսակով<sup>21</sup>.

	<b>Ձուգորդման տեմպերը</b>	<b>Օրինակներ</b>
1	A	բեր
2	a A	-
3	A b	բեր-եց
4	A c	բեր-են, բեր-ի
5	a A b	չ-բեր-եց
6	a A c	չ-բեր-են, չ-բեր-ի
7	A b c	բեր-եց-ի
8	a A b c	չ-բեր-եց-ի

Կաղապարակազմ մասնիկների համար կարելի է նշել բովանդակու-  
թյան պլանի հետևյալ արժեքները. 1) **a** կարգի մասնիկները հայտնի են

<sup>20</sup> Գ. Ջահուկյանը դասահոլովանիշ է համարում այն հոլովական վերջավորու-  
թյունները, որոնք հատուկ են անունների որոշակի դասի (ժամանականիշ, ազգակ-  
ցական անուններ և այլն):

<sup>21</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 233:

որպես եղանականիշ նախամասնիկներ<sup>22</sup>, 2) **b** կարգի մասնիկները՝ **կերպա-տիպարա-սեռանիշ** վերջամասնիկներ, 3) **c** կարգի մասնիկներն ընդունված է անվանել **ժամանակա-թվա-դիմանիշ** վերջավորություններ:

Եթե հայերենում անունների հոլովումն իրակացվում է թե՛ նյութական ձևայինների կցման՝ մասնիկավորման, թե՛ հիմքի՝ ձևաբանական արժեք ունեցող հնչյունական հերթագայությունների միջոցով (հնչյունական հերթագայությունների ենթարկվում է հիմքի միակ կամ վերջին վանկի վանկարար տարրը), ապա թուրքերենում այն իրագործվում է սոսկ մասնիկավորման միջոցով: Ուսումնասիրվող երկու լեզուների համար բնորոշ է, որ հոլովակազմիչները բառին կցվում են վերջից:

Թուրքերենում բոլոր ձևայինները, անկախ այն բանից, որ դրանք կցվում են անվանական թե բայական հիմքին, բաժանվում են երկու մեծ խմբի. 1) բառաքերականական-բառակազմական ձևայիններ (A), որոնք գլխավորապես կոնկրետացնում են բառի բառային իմաստը, 2) գործառնությունականական ձևայիններ (B), որոնք բառակապակցության կամ նախադասության մեջ որոշում են տվյալ բառի գործառնությունը: Թուրքերենում վերջամասնիկները բառահիմքին կցվում են որոշակի հաջորդականությամբ. առաջինն ավելանում է այն մասնիկը, որը ցույց է տալիս առավելագույնս ընդհանուր ծավալի (քերականական) կարգ, այնուհետև կցվում է առավել մասնավոր ծավալի կարգ արտահայտող ձևակերտը և այդպես շարունակ:

<i>baba -</i>	<i>lar -</i>	<i>ımız -</i>	<i>dan</i>	<i>babalarımızdan</i>
հիմք	ծ. 1	ծ. 2	ծ. 3	
<i>hայր -</i>	<i>եր -</i>	<i>մեր -</i>	<i>ից</i>	<i>մեր հայրերից</i>

Թուրքերենում, ինչպես և նկատում ենք վերոհիշյալ օրինակում, հոգնակերտ *-lar, -ler* վերջավորությունները նախորդում են պատկանելության վերջավորություններին. *defterlerim (defter-ler-im)* «տետրերս», *defterleriniz (defter-ler-iniz)* «ձեր տետրերը» և այլն: Երրորդ դեմքի հոգնակի թիվն այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում. այստեղ սպասվելիք *defter-ler-leri* «նրանց տետրերը» ձևի փոխարեն վանկաստիկության (հապլոլոգիա) հետևանքով ունենք *defterler-i* տարբերակը, որը նաև նշանակում է «նրա տետրերը»: Այսպիսով, *defterleri* ձևը, որի կոնկրետ իմաստը կարելի է հասկանալ միայն տվյալ համատեքստից, առանձին վերցրած՝ ունի երեք իմաստ. 1) *defter-leri* «նրանց տետրերը», 2) *defterler-i* «նրա տետրերը», 3) *defterler-i* «նրանց տետրերը»: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև բայանուն գոյականները, որոնց նույնպես կարող են կցվել պատկանելության և հոլովական թեքություններ.

(benim) almam	իմ վերցնելը /վերցնելս	(bizim) gitmemiz	մեր գնալը
(senin) ağlaman	քո լալը/լալի	(sizin) gülmeniz	ձեր ծիծաղելը
(onun) okuması	նրա կարդալը	(onların) gülümsemeleri	նրանց ժպտալը

<sup>22</sup> Եղանականիշ բուն մասնիկները **չ(ը)** և **կ(ը)** նախամասնիկներն են:

Քերականական կարգերի ծավալի ընդհանրականության աստիճանի կանոնը գործում է և բայական համակարգում:

Թուրքերեն *oku-yama-yor-sunuz* բառը բաղկացած է *oku* բառահիմքից և վերջինիս կցված մասնիկներից՝ *-yama* (1-ին աստիճանի), *-yor* (2-րդ աստիճանի), *-sunuz* (3-րդ աստիճանի): Բառի թարգմանությունը հետևյալն է՝ «**Դուք չեք կարող կարդալ**», բառացիորեն՝ «**կարդալ + չկարողանալ + այժմ + դուք**»: Այստեղ *-ama* մասնիկն ամենամոտն է գտնվում հիմքին, քանի որ նրա արտահայտած «անկարելիության կարգը» (կարդալ չկարողանալ) ծավալային առումով ավելի լայն է սահմանական եղանակի ներկա ժամանակի կարգից (*-yor* ցուցիչ), որն իր հերթին ավելի լայն է երկրորդ դեմքի հոգնակի թվի վերջավորությունից (*-sunuz* ցուցիչ): «Անկարելիության կարգի» (կարդալ չկարողանալ, գրել չկարողանալ և այլն) մեջ կարող է գտնվել ոչ միայն սահմանական եղանակը, այլև մյուսները, ոչ միայն սահմանական եղանակի ներկա ժամանակը, այլև մյուս ժամանակներն ու դեմքերը: Այսպիսով, վերջամասնիկների աստիճանական ավելացումը հիմնված է հիմքի աստիճանական կոնկրետացման սկզբունքի վրա: Նման հաջորդականության շնորհիվ ձայնաներդաշնակությունը կարող է ունենալ որոշակի տատանումներ. օրինակ՝ *kürk-çü-ler-imiz* «ներ մորթեգործները», բառացիորեն՝ «մորթի[ա]-գործ-ներ-ներ». առաջին աստիճանի վերջամասնիկ *-çü-*-ն, ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն, ընդհանրապես կարող է հանդես գալ չորս տարբերակով, այսինքն՝ արտացոլում է և՛ քմային, և՛ շրթնային ներդաշնակություն, իսկ երկրորդ աստիճանի *-ler* մասնիկը կիրառվում է երկու տարբերակով, և նրանից հետո շրթնային ներդաշնակությունը, փաստորեն, դադարում է, թեև հաջորդող երրորդ աստիճանի *-imiz* վերջամասնիկը նույնպես ունի կիրառման չորս տարբերակ և տեսականորեն կարող էր հանդես գալ նաև *-iimiz* տարբերակով:

Անդրադառնալով բայի կարգին, նշենք, որ այն, անկախ իմաստային պարզորոշությունից, հայտնի է առանձնահատուկ ձևաբանական հատկանիշներով: Յուրաքանչյուր բայածև կարող է հանդես գալ բայական չորս հիմնական կերպով. 1) դրական կերպ, որում կերպի ձևական ցուցիչները բացակայում են. *al* «վերցրու՛, առ՛» (*al-mak* «**վերցնել, առնել**»), *gel* «արի՛» (*gel-mek* «**գալ**»), 2) ժխտական կերպ, որում ժխտականությունը արտահայտվում է *-ma*, *-me* վերջամասնիկների միջոցով, որոնք կցվում են բառահիմքին. *al-ma* «մի՛ վերցրու, մի՛ առ» (*al-ma-mak* «**չվերցնել, չառնել**»), *gel-me* «մի՛ արի» (*gel-me-mek* «**չգալ**»), 3) անկարելիության կերպ, որն արտահայտվում է *-ama*, *-eme* մասնիկների միջոցով. *götür-eme-y-eceğim* «չեն կարողանալու տանել» (*götür-eme-mek* «**չկարողանալ տանել**»), *inan-ama-dim* «չկարողացա հավատալ» (*inan-ama-mak* «**չկարողանալ հավատալ**»), 4) կարելիության կերպ, որը կազմվում է բայահիմքին *-a*, *-e* (*-ya*, *-ye*) մասնիկների և *-bilmek* (գիտենալ, իմանալ) բայի կցման միջոցով. *al-a-bil-mek* «**կարողանալ վերցնել**», *gel-e-bil-mek* «**կարողանալ գալ**»:

Թուրքերենում բայի վառ արտահայտված յուրահատկությունը դրսևորվում է հատկապես պատճառական բայերում. օրինակ՝ *yaz-mak* «գրել», *yaz-dir-mak* «գրել տալ, ստիպել գրել»: Հատկանշական է, որ բայական հասկացությունների հիմնական և ածանցյալ (չեզոք և պատ-

ճառական) ձևերը հայերենում և թուրքերենում չեն համընկնում. օրինակ՝ «սպանել»-ը (*öldürmek*) թուրքերենում «մեռնել» (*ölmek*) բայից ածանցված պատճառական կազմություն է (սրա համարժեք կազմությունը հայերենում կլինի *մեռցնել*), այլ կերպ՝ *սպանել=ստիպել մեռնել=մեռցնել*, նույն ձևով թուրքերեն «եփել» իմաստն արտահայտվում է պատճառականով՝ «ստիպել եփվել», հմմտ. հայերեն՝ *եռալ - եռացնել=ստիպել եռալ*:

Այսպիսով, կատարելով բառերի ձևաբանական կառուցվածքի մանրամասն վերլուծություն՝ հանգում ենք այն եզրակացության, որ ըստ լեզուների ձևաբանական դասակարգման՝ թե՛ ժամանակակից հայերենը և թե՛ թուրքերենը պատկանում են կցական լեզուների տիպին, որի համար բնութագրական է բառակազմական մասնիկավորումը, ընդ որում, թուրքերենում բառերը արմատի (հիմքի) և նրա վրա շարված անփոփոխ ձևաբանական «շղթաներ» են, ի տարբերություն հայերենի, որտեղ ձևաբանական կցման ժամանակ տեղի են ունենում հնչյունական որոշ փոփոխություններ (ծուլում), օրինակ՝ *որդի+ակ>որդակ*: Հավելենք նաև, որ թուրքերենի թեքված բառաձևերում ձևաբանական թիվն անհամեմատ ավելի մեծ է ի հաշիվ բառահարաբերական ձևաբանական առատության, որոնք հայերենում ավելի քիչ են: Եթե հայերենին բնորոշ է թե՛ նախածանցումը, թե՛ վերջածանցումը, ապա թուրքերենը բացառապես վերջամասնիկավոր լեզու է, որտեղ բառերը բաղկացած են հիմնականում բառարմատից և նրան կցված առնվազն երկու կամ երեք վերջամասնիկներից: Ի տարբերություն ժամանակակից հայերենի՝ թուրքերենին բնորոշ է ձայնավորների առնմանության տեսակներից մեկը՝ ձայնավորների ներդաշնակությունը, երբ կցվող մասնիկի ձայնավորների բնույթը պայմանավորվում է արմատի ձայնավորի տեսակով, որի պատճառով առաջանում են մեկ ձևաբանական տարբերակներ՝ ենթաձևաբանական: Ուսումնասիրվող երկու լեզուներում էլ վերջամասնիկները բառահիմքին կցվում են որոշակի հաջորդականությամբ:

**АРМЕН МЕЛКОНЯН – Морфемная структура слова в современном армянском и турецком языках.** – Статья посвящена сопоставительному анализу структуры слова в современном армянском и турецком языках с точки зрения агглютинации, свойственной обоим языкам. Подробно проанализировав морфемный состав слова, автор приходит к следующему заключению: по морфологической классификации не только современный армянский, но и турецкий принадлежат к типу агглютинативных языков, где слова – это корни с "цепочками" морфем-аффиксов, "просветы" между которыми всегда видны. Если армянскому присуща как префиксация, так и суффиксация с явным преобладанием последней, то турецкий – язык исключительно суффиксальный. Широкие возможности суффиксации в турецком языке отчасти обусловили тенденцию к однозначности суффиксов.

В современном армянском языке морфемы формообразования и словообразования, как правило, дифференцированы. Что касается турецкого языка, то здесь все аффиксы словообразования, независимо от корня, именной он или глагольный, разделяются на две большие группы: 1) лексико-грамматические аффиксы, которые конкретизируют главным образом лексическое значение слова; 2) функционально-грамматические аффиксы, которые определяют функцию данного слова в составе словосочетания или предложения, не изменяя лексического значения.

**ARMEN MELKONYAN – *The morphemic structure of the word in modern Armenian and Turkish.*** – The present paper considers the comparative research into the word structure in modern Armenian and Turkish from the viewpoint of agglutination, characteristic of both languages.

Having studied the morphemic structure of the word, the author has arrived at a conclusion that according to their morphological classification, both modern Armenian and Turkish belong to the type of agglutinative languages where the words seem to be "chains" of morpheme-affixes agglutinated to the root of the word. The word, formed by a principle of agglutination, seems to be a long train where the root is the steam locomotive and the chain of affixes is the carriage. The "spaces" between the root and affixes are always visible. If both prefixation and suffixation are inherent in Armenian with the obvious prevalence of the latter, Turkish is exclusively a language of suffixes. The wide range of suffixes in Turkish accounts for the monosemanticity of suffixes.

One generally distinguishes between inflectional and word-formational / derivational suffixes in modern Armenian. As far as Turkish is concerned, all affixes are divided in two big groups, regardless of the fact whether the root of the word is verbal or nominal: 1) lexical-grammatical affixes specifying the lexical meaning of the word; 2) functional-grammatical affixes determining the function of the word without changing its lexical meaning.